ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Տեխնիկական չափանիշներ

- Համակարգը՝ Microsoft Office Word
- Թղթի չափը՝ A4
- Էջերի քանակը՝ 5-15
- Տողերի միջև հեռավորությունը՝ 1,15
- Պարբերությունների միջև հեռավորությունը 0
- Լուսանցքները՝ բոլոր կողմերից՝ 2 սմ
- Տեքստի տառատեսակը՝ «Sylfaen»
- Տառաչափը՝ 12
- մարզի, քաղաքի կամ գյուղի անունը, դպրոցի համարը կամ անունը, հեղինակի կարգավիճակը, էլփոստը, հեռախոսահամարը
- Հղումները՝ տեքստում՝ ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի [3, էջ 15]:
- Գրականության ցանկ (եթե կա), որտեղ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, գծիկ, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, երկու թեք գծիկներ//, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, քաղաքը, որտեղ հրատարակվել է, հրատարակման թվականը, հատորի և թողարկման հերթական համարը, օգտագործված էջերը կամ գրքի էջերի ընդհանուր քանակը (Օր.՝ Սևոյան Գ.Գ.- Կենսաբանության խնդիրների ժողովածու: Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների համար // Երևան: «Աստղիկ Գրատուն» հրատ: 2012: էջ 25: 96 էջ): Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և հասանելիության ամսաթիվը (օրինակ՝ … //https://.... 14.02.2024)

2. Աշխատանքի ձևակերպման հերթականությունը

Հոդվածի դեպքում՝

- վերնագիրը՝ մուգ և մեծատառերով,
- Հեղինակ(ներ)ի անուն, ազգանուն, մարզի, քաղաքի կամ գյուղի անունը, դպրոցի համարը կամ անունը, հեղինակի կարգավիճակը՝ սովորական տառերով, էլփոստը, հեռախոսահամարը:
- Աշխատանքի նպատակի ձևակերպում/հիմավորում,
- Աշխատանքի բովանդակության ընդարձակ ներկայացում՝ հղումներով:
- Արդյունքների վերլուծություն, եզրակացություն, գրականության ցանկ:

Նախագծի դեպքում՝ աղյուսակով ներկայացնել

1.	Նախագծի վերնագիրը(մեծատառերով՝ մուգ)	
2.	Նախագծին մասնակցի(ների) անուն, ազգանուններ 1. 2.	Յուրաքանչյուր մասնակցի դերը նախագծում 1. 2. ....
3.	Նախագծի ղեկավարի անուն, ազգանուն	
4.	Նախագծի օբյեկտը	
5.	Նախագծի իրականացման վայրը, ժամկետները՝ փուլերով	- -
6.	Աշակերտական արդեն կատարված նախագծի դեպքում՝ դպրոցում գնահատման համար նախատեսված ներկայացման ձևը (բանավոր	

	զեկուցում, սահիկաշարով՝ բանավոր ներկայացում, վերջնական արդյունք՝ ապրանքի տեսքով կամ այլ) և ժամկետը	

Աղյուսակից հետո՝

- Աշխատանքի նպատակի ձևակերպում/հիմնավորում,
- Աշխատանքի բովանդակության ընդարձակ ներկայացում՝ հղումներով:
- Արդյունքների վերլուծություն, եզրակացություն, գրականության ցանկ:

Աշխատաժողովի կազմակերպման և աշխատանքների գնահատման կարգ

1. Զեկուցումները կներկայացվեն և քննարկումներ կկազմակերպվեն առկա և առցանց մասնակցությամբ/ձևաչափով:

2. Զեկուցման համար կտրվի առավելագույնը 10 րոպե, քննարկումների համար՝ 5 րոպե:

3. Զեկուցումները ներկայացնելուց հետո կգնահատվեն կազմակերպող հանձնաժողովի կողմից՝ ըստ հետևյալ չափանիշների.

- նախագծի դեպքում՝ հետազոտական բաղադրիչի առկայություն,
  հոդվածի դեպքում՝ ինքնուրույն վերլուծական մասի առկայություն,
- կատարման ու ձևակերպման ամբողջականություն,
- տեխնիկական պահանջներին համապատասխանության ապահովում,
- ներկայացման հմտություններ (սահիկահանդես՝ առկայություն և որակ, նյութի տիրապետում, գրագետ խոսքով ներկայացում, առաջադրված հարցերի պատասխանների հիմնավորում):

4. Բոլոր մասնակիցներին կտրվի մասնակցության հավաստագիր՝ ՇՊՀ-ի ռեկտորի ստորագրությամբ ու կնիքով:

5. Լավագույն 3 աշխատանքներ կարժանանան մրցանակային խրախուսանքի:

6. Աշխատանքների ավարտից հետո մասնակիցները կդիտեն հոլովակ՝ «Կենսաբանության և քիմիայի ամբիոնի» առօրյայի մասին, կծանոթանան լաբորատորիաներին, տարբեր տարիների ուսանողների հետազոտական աշխատանքներին, ինքնուրույն պատրաստած ուսումնական նյութերին:

7. Աշխատաժողովի ավարտին մարզեր գնացող մասնակիցները ավտոկայան կտեղափոխվեն ՇՊՀ-ի ավտոբուսով:

Հարգանքներով՝ Աշխատաժողովի կազմակերպչական աշխատակազմ՝

1. Ալեքսանյան Սամվել –Կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչի ժ/պ,
   կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
2. Ադամյան Նելլի - Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ,
   աշխատաժողովի կազմակերպման պատասխանատու